ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.	Անունը, ազգանունը	Տիգրան Գաբրիելյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
3.	Գործուղման վայրը և ժամկետը	2019 թվականի օգոստոսի 23-27 Տրոնհեյմ (Նորվեգիայի Թագավորություն)
4.	Հրավիրող կողմը	ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (ՊԳԿ)
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	Մասնակցութուն ՊԳԿ-ի ձկնաբուծության կոմիտեի ակվակուլտուրայի հարցերով ենթակոմիտեի 10-րդ նստաշրջանին
6.	Քննարկված թեմաները	Նստաշրջանի ընթացքում քննարկվել են ակվակուլտուրայի ոլորտին առնչվող մարտահրավերները, համաշխարհային ջրային տնտեսության զարգացման հիմնախնդիրները և միտումները, ձկնաբուծության և ակվակուլտուրայի բնագավառներում միջազգային համագործակցության ամրապնդման ուղղությամբ ձեռնարկվելիք հետագա գործողությունները:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	«Ակվակուլտուրայի կիրառումը սովի վերացման գործում, սննդով ապահովումը, առողջության պահպանումը և ճիշտ սնումը», «Սննդարդյունաբերության և գյուղատնտեսության վարման համար աշխարհի ջրային գենետիկ ռեսուրսների վիճակը և համընդհանուր պլանի մշակման հնարավոր տարբերակները», «Ձկնային տնտեսության կոմիտեի ձկան առևտրի ենթակոմիտեի զեկույցի», «Ակվակուրլտուրայի կայուն զարգացման փորձի ուսումնասիրման վերաբերյալ», «Ակվակուլտուրայի և առևտրային ձկնաբուծության վերաբերող պատասխանատու ձկնորսության վարման օրենսգրքի դրույթների իրականացման վերաբերյալ», «Փուլային մեթոդների հիման վրա ջրային կենդանիների հիվանդությունների կանխարգելման և ակվակուլտուրայում հիվանդությունների տարածման ռիսկի կառավարման վերաբերյալ» թեմաներ:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված	Հանդիպման ընթացքում երկկողմ փաստաթղթեր չեն ստորագրվել:

	փաստաթղթերը	
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Մասնակից երկրների կողմից կարևորվեց տեղեկատվության փոխանակման հարցը, ինչպես նաև նստաշրջանի ընթացքում ներկայացված փաստաթղթերում անդամ երկրներն առաջարկեցին փաստաթղթերում առավել մանրամասն անդրադառնալ հիվանդությունների կանխարգելման ու վերացման մեթոդների մշակման, տրանսպորտային միջոցներով տեղափոխման ժամանակ հնարավոր ախտահարումների բացառման հարցերին և արտադրության ու տրանսպորտի շղթայում առաջնորդվել Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (OIE) ստանդարտներով:
10.	Գործուղվողները	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյան
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	29.08. 2019թ.